6365

324
4-24

1931

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

ԱԴՐԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԲԱԳՎԻ ԿՈՄԻՏԵ

329.15 : 382(47

89

# ՆԱԿԱԶ

## ԲԱՆՎՈՐՆԵՐԻ, ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ-ԲԱՆԱԿԱՅԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ 11-ՐԴ ՀՐԱՎԵՐԻ ԲԱԳՎԻ ԽՈՐՀՐԴԻՆ

ՀԱՆՁՆԱՐԱՐՎՈՒՄ Ե ԱԴՐԿՈՄԿՈՒՍԻ (Բ)
ԲԱԳՎԻ ԿՈՄԻՏԵՅԻ ԿՈՂՄԻՑ
ԸՆՏՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻՆ

324
Ն-24

1931—ԲԱԳՈՒ

2001

2010

G-24

10670 мк.

Тип. „Красный Восток" Азполиграфа
ВСНХ. Баку, Карантинная, 84.
Главлит 146. С.-ф. Б-5.
Зак. 488.—750.

2455

# ԸՆԿԵՐՆԵՐ

Հունվարի 10-ից մինչև փետրվարի 5-ը Բաքվի և նրա ռայոնների պրոլետարիատն ու բոլոր աշխատավորները վերընտրելու են խորհուրդների իրենց պատգամավորներին։ Վերընտրությունները տեղի են ունենում մի այնպիսի ժամանակաշրջանում, յերբ բանվոր դասակարգը՝ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, հենվելով չքավորության և կոլխոզնիկների վրա, գյուղացիության միջակային մասսաների հետ սերտ դաշինք կռած՝ անցել է ծավալուն սոցիալիստական հարձակման ամբողջ ֆրոնտով՝ թե արդյունաբերության և թե գյուղական տնտեսության բնագավառում։

Մենք արդեն մտել ենք սոցիալիստական ժամանակաշրջանը։ 5-ամյակի 3-րդ—վճռական տարում մենք կավարտենք սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցումը։ Հենց այժմ խորհրդային իշխանության դիրքերն ավելի ամուր են, քան յերբ և իցե։ Աճել է արդյունաբերության սոցիալիստական բազան։ Աճել է բանվոր դասակարգի թիվն ու ույժը։ Լիովին վերացվել է գործազրկությունն, անշեղ կերպով աճում է բանվոր դասակարգի նյութական և կուլտուրական մակարդակը։ Միջակ գյուղացիության մասսաները վճռականորեն և անդարձ կերպով կանգնել են կոլեկտիվացման ճամբին, վորը յերկրում դասակարգային ուժերի նոր փոխհարաբերություն է ստեղծել։ Գյուղացիական տնտեսությունների մեկ քառորդն արդեն միացված է կոլխոզներում՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա վոչնչացվում է կուլակությունը—վորպես դասակարգ։ Հաջողությամբ լուծվել է հացահատիկի պրոբլեմը՝ խոշոր, սոցիալիստական հողագործության արագ զարգացման ճանապարհով։ Ինդուստրացման հեղափոխականացնող ազդեցությունը՝ գյուղական տնտեսության վրա, պրոլետարական քաղաքի ազդեցությունը՝ գյուղի վրա—անչափ աճել է։ Այդ բոլոր նվաճումները մենք ունեցել ենք մեր կուսակցության լենինյան հիմնական գիծն անշեղ տանելու հիման վրա և բանվոր ու աշխատավոր մասսաների հսկայական ստեղծագործական վերելքի շնորհիվ։

Ամբողջ ֆրոնտի վրա սոցիալիստական ծավալուն հարձակումն անխուսափելի կերպով ուժեղացնում է դասակարգային պայքարը մեր յերկրում։ Այդ սրումը յերևան է գալիս հակահեղափոխական վնասարարության ձևով, կուլակային պայքարի ձևով՝ կոլխոզների դեմ, հա-

7213-57

ցամթերումների սաբոտաժով և բամբակաբուծության զարգացմանը ընդդիմադրելով։ Սոցիալիզմի հաջողությունները մահվան են դատապարտում շահագործող դասակարգերի մնացորդներին. կուսակցության և խորհրդային իշխանության քաղաքականության դեմ ընդդիմադրությունն աճում է այդ դասակարգերի կողմից։ Համաշխարհային բուրժուազիան փորձում է խանգարել մեր հնգամյակի իրագործումը։ Ավելի ու ավելի սրվող համաշխարհային կապիտալիստական կրիզիսը տանում է դեպի հեղափոխական շարժման աճումը, դեպի կապիտալիզմի բոլոր հակասությունների խորացումը, դեպի պատերազմի վտանգի և Խորհրդային Միության դեմ ինտերվենցիայի սպառնալիքի աճումը։ »

**ՄԵՆՔ հանձնարարում ենք Բագխորհրդին** բոլոր միջոցները ձեռք առնել երկրի պաշտպանության կարողությունն էլ ավելի ուժեղացնելու և ամրապնդելու Կարմիր Բանակի ու նրա ազգային զորամասերի մարտական հզորությունը, որպեսզի պատրաստ լինենք ամեն մի րոպե արժանի հակահարվածը տալու ինտերվենտներին։

**ՄԵՆՔ պարտավորեցնում ենք** մեր պատգամավորներին՝ պահպան կանգնել պրոլետարիատի դասակարգային շահերին, ջախջախիչ հակահարված տալ թշնամիների սողոսկումներին, վճռական պայքար տանել կուսակցության հիմնական գծի համար, պայքարել սոցիալիստական շինարարության տեմպերն ուժեղացնելու և 5-ամյակը 4 տարում, իսկ նավթային արդյունաբերության մեջ 2 և կես տարում կատարելու համար, պայքարել բամբակի պլանը—1931 թվին 205.000 հեկտար—կատարելու համար, պայքարել Ադրբեջանի և Անդրկովկասի գյուղի սոցիալիստական վերակառուցման տեմպն արագացնելու համար, այնտեղ Բագվի պրոլետարիատի ղեկավար դերն ուժեղացնելու համար։

Ադրբեջանի և ամբողջ Անդրկովկասի պայմաններում հատուկ ուշադրություն պիտի դարձնել լենինյան ազգային քաղաքականությունը շարունակելու և նրա իրականացումը զարգացնելու հարցերին. պիտի ամրապնդել Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների ինտերնացիոնալ միությունը, պրոլետարական համերաշխությունը ու զարգացնել նրանց՝ ձևով ազգային, բովանդակությամբ պրոլետարական կուլտուրան։

**ՄԵՆՔ նակազ ենք տալիս մեր պատգամավորներին՝** շարունակել պայքարն էլ ավելի ամրապնդելու Անդրկովկասյան Ֆեդերացիայի՝ որպես մեր մեծ Խորհրդային Միության—ամբողջ աշխարհում աշխատավորների յեղբայրության այդ նախատիպարի—մի մասի՝ տնտեսական և քաղաքական հզորությունը։

**ՄԵՆՔ պարտավորեցնում ենք մեր պատգամավորներին** անհաշտ պայքար մղելու կոմունիստական կուսակցության հիմնական գծի համար,—



այն կուսակցության, որը հաջողությամբ պայքարում է այդ գծից արվող շեղումների դեմ, կռվում է մեծապետական շովինիզմի—որպես գլխավոր վտանգի դեմ և ինտերվենտներին ձեռնտու տեղական նացիոնալիզմի դեմ,—կռվում է Լենինյան ազգային քաղաքականության համար։

Բագվի խորհուրդը պետք է օգտագործի բոլոր տնտեսական և քաղաքական լծակները, պետք է գործադրի իր բոլոր ուժերն Ադրբեջանի և Անդրկովկասի գյուղի սոցիալիստական վերակառուցման ղեկավարությունն ու օգնությունն ուժեղացնելու համար, հենց դրանով ամրապնդելով դաշինքը պրոլետարիատի ու գյուղացիության հիմնական մասսայի միջև։

Այդ բանը պետք է արվի նավթի և բամբակի ստուգիչ թվերը կատարելով ու գերակատարելով, բատրակներին, կոլխոզնիկներին, գյուղի չքավոր-միջակային մասսաներին համախմբելով և կազմակերպելով կուլակության դեմ մղվող պայքարի շուրջը, գյուղի կոլլեկտիվացման համար։

5-ամյակի 3-րդ վճռական տարում սոցիալիստական շինարարության խնդիրներն իրականացնելու համար պետք է վճռականորեն վերակառուցել բոլոր մասսայական կազմակերպությունների և այդ թվում ու առաջին հերթին խորհուրդների աշխատանքը։

Խորհուրդները, որպես պրոլետարիատի պայքարի մարտական օրգանները՝ կուսակցության հիմնական գիծն իրականացնելու գործում, պետք է գլուխ կանգնեն բանվորական մասսաների բուռն թափով աճող ստեղծագործական ակտիվությանը (սոցիալիստական մրցություն, հարվածայնություն, շեֆություն պետական ապարատի վրա, հանդիպակաց արդֆինպլան և այլն), լայնորեն ծավալեն պրոլետարական դեմոկրատիան ու ինքնաքննադատությունը, շարունակելով ավելի խիստ պայքարել բյուրոկրատիզմի դեմ, իրենց ամբողջ աշխատանքի յերեսը դեպի արտադրություն, դեպի կոլխոզային ու սովխոզային շինարարությունը դարձնեն, պրոլետարական մասսաներին և բոլոր աշխատավորներին համախմբեն կուսակցության Լենինյան գծի շուրջը։

«Խորհուրդների աշխատանքն իրականում արմատապես վերակառուցելու համար՝ անհրաժեշտ է անպայման իրականացնել կուսակցության Լենինյան գիծն՝ առանց այդ քաղաքականության աջ և «ձախ» օպորտունիստական ծռումների խորհրդային պրակտիկայում և ամենից առաջ խորհուրդների ղեկավար օրգանների պրակտիկայում։

Ծավալուն սոցիալիստական հարձակման շրջանում կուսակցությունը հատկապես չի կարող հաշտվել խորհրդային օրգանների ղեկավարության աջ-օպորտունիստական պրակտիկայի հետ, որը (պրակ-

տեկան) վոչ միայն չի ապահովում շինարարության համար ընդունած բոլշևիկյան տեմպերը և բյուրոկրատիզմի դեմ տարվող հետևողական պայքարը՝ ծավալուն պրոլետարական ինքնաքննադատության հիման վրա՝ այլև դա գործնականում նշանակում է կուսակցության կարևորագույն դիրեկտիվները սաբոտաժի ենթարկել, իսկ երբեմն ուղղակի խախտել։ Այդ պատճառով՝ ներկա պայմաններում աջ օպորտունիստները և անսկզբունք հաշտվողականները տեղ չեն կարող ունենալ խորհուրդների ղեկավար օրգաններում»։

(ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի և Կենտ. Վեր. Հանձ. դեկտեմբերյան պլենում)։

Հոկտեմբերյան հեղափոխության 13 տարիներն ապացուցել են, վոր միայն Կոմկուսն է խորհուրդների միակ ղեկավարը՝ նրանց կողմից սոցիալիզմի համար տարվող պայքարում. միայն խորհուրդների մեջ կուսակցության լիակատար ազդեցությունը նրանց դարձրել է պրոլետարական դիկտատուրայի մարտական օրգաններ և սոցիալիստական շինարարության օրգաններ։

Խորհուրդները պետք է էլ ավելի ամուր համախմբվեն մեր ղեկավարի—Լենինյան կոմունիստական կուսակցության շուրջը, աշխատավորների միլիոններին քաշեն սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակցությանը՝ մեր աճման բոլոր դժվարությունները հաղթահարելու, սոցիալիզմի արագ և լիակատար հաղթանակի համար պայքարելու։

Մեր պատգամավորների ուշադրությունը կենտրոնացնելով այն բանի վրա, վոր Բաղխորհրդի ամբողջ պրակտիկ աշխատանքը պետք է ենթարկվի սոցիալիստական շինարարության կարևորագույն խնդիրները լուծելուն, հանձնարարում ենք նրանց՝ կյանքում իրագործելու հետևյալ միջոցառումները.—

## I. ՆԱՎԹԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Մոբիլիզացիայի ենթարկել բանվորների լայն մասսաներին՝ իրագործելու ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի 1930 թ. նոյեմբեր 15-ի դիրեկտիվը նավթարդյունաբերության վերաբերյալ՝ հասցնել նավթահանումը 1931 թ. 15 միլ. տոննի։

Ապահովել, վոր Ազնեֆթի նավթահանումն աճի և հնգամյակի վերջը հասնի 20—21 միլ. տոննի։ Հորափորման նկատմամբ այնպես անել, վոր փորման արագությունն ավելանա և հնգամյակի վերջին հասնի 300 մետրի։

2. Ապահովել հնգամյակի 3-րդ ու 4-րդ տարիների արդֆինպլանի իրագործումը։ Դրա համար՝



ա) համախմբել բանվորական մասսաներին պայքարելու թե վորակի և թե քանակի համար (աշխատանքի արտադրողականության բարձրացում, ինքնարժեքի իջեցում, արտադրանքի վորակի լավացում) սոցիալիստական մրցությունը և հարվածայնությունն ու հանդիպակաց արդֆինպլանն ավելի ես ծավալելու հիման վրա.

բ) միջոցներ ձեռք առնել ժամանակին տեխնիկական կադրեր և վորակյալ բանվորական ուժ պատրաստելու համար, ուշադրություն դարձնելով, վոր հիմնական բնակչությունից բանվորների նոր կադրեր ստեղծվեն և արտադրության մեջ արմատանա կանանց աշխատանքը.

գ) շարունակել վճռական պայքարն աշխատանքային դիսցիպլինայի համար, ընդդեմ պրոգուլների, բանվորական ույժի հոսունության և այլն։

3. Վճռական բեկում առաջ բերել կառուցողական գործում՝ ուժեղացնելով մեքենայացումը, իջեցնելով ինքնարժեքը և բարձրացնելով վորակը։

## II. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Բաղխորհրդի աշխատանքի անկյունաքարը դարձնել տրանսպորտի հարցերը, վորը հնգամյակի 3-րդ տարում պետք է վճռական դեր խաղա տեղափոխությունների ծրագրի իրագործման համար, գըլխավորապես նավթի արտահանման գործում։ Բարելավել տրանսպորտի աշխատանքները, ամեն կերպ օգնել տրանսպորտային տնտեսության վերակազմությանը, աշխատանքային դիսցիպլինայի ամրացմանը, և տրանսպորտի բանվորների մատակարարումն ու կուլտուր-կենցաղային կարիքների սպասարկումը լավացնել։

## III. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Ուժեղացնել Բաքվի պրոլետարիատի օգնությունը Ադրբեջանի գյուղին՝ գյուղի սոցիալիստական վերակառուցման, համատարած կոլլեկտիվացման իրագործումը նախապատրաստելու և բամբակի ծրագիրն կատարելու գործում։ Դրա համար ուժեղացնել կապը Խորհրդային Ադրբեջանի ռայոնների հետ, լավացնել ու լայնացնել շեֆային աշխատանքը, խորհրդի անդամներին գյուղ ուղարկել մշտական աշխատանքի և բրիգադաներ ուղարկել գյուղատնտեսական կամպանիաներ տանելու համար։

Այս բոլոր միջոցներն առաջին հերթին պետք է ուղղված լինեն իրականացնելու 1931 թ. 205 հազար հեկտար բամբակ ցանելու պլանը և լրիվին կատարելու բամբակամթերման պլանը։

2. Վերակառուցել Ապշերոնի գյուղական տնտեսությունը և Ապշերոնը դարձնել հատուկ մշակույթների ռայոն (բանջարաբուծություն, խաղողաբուծություն, կաուչուկաբեր բույսեր և այլն)։

## IV. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

*1. Սպառողական կոոպերացիայի աշխատանքը սոցիալիստական շինարարության պահանջներին հարմարեցնելու, բաշխման մեջ դասակարգային սկզբունքը պարզորոշ կերպով անցկացնելու և իրական աշխատավարձը ավելի ևս բարձրացնելու համար սպառողական կոոպերացիայի գործունեությունը պետք է արմատապես վերափոխել։ Դրա համար.—*

*ա) փակ բաշխիչների ու ճաշարանների ցանցը լայնացնել և այնպես անել, որ բոլոր հիմնական ձեռնարկներն ու հանքերը փակ բաշխիչներ ունենան. կանոնավորել փակ բաշխիչներին ապրանքներ մատակարարելու գործը.*

*բ) կոոպերացիայի աշխատանքը հարմարեցնել արդֆինպլանի համար մղվող պայքարին (հարվածայիններին, հարվածային ձեռնարկներին ու ցեխերին ամենալավ կերպով և առաջին հերթին մատակարարել և այլն).*

*գ) այնպես անել, որ ապրանքներն ավելի արագ կերպով անցնեն սպառողների ձեռքը, վճռականորեն պայքարելով կոոպերացիան և առևտուրն արհեստական կերպով ապրաքակոխ անելու դեմ։*

*2. Կոոպերատիվային ապարատը դասակարգային տեսակետից խորթ և վնասատու տարրերից ազատելու, նույնպես և կուսակցության վերջին որոշումների հիման վրա կոոպերացիայի ապարատի մեջ դասակարգային պարզորոշություն մտցնելու համար՝ ավելի ևս ուժեղացնել բանվորական հսկողությունը կոոպերացիայի աշխատանքների վրա։*

*3. Ուժեղացնել հասարակական սննդին վերաբերող աշխատանքը, դրա համար կառուցել նոր ֆաբրիկ-խոհանոցներ ու լայնացնել ճաշարանների և բաշխման կետերի ցանցը։*

*Բարելավել հաց թխելու գործը և կառուցել հաց թխելու 2 նոր գործարան։*

*4. Այնպես անել, որ կոոպերացիան իրականացնի քաղաքամերձ բանջարանոցների, կաթնային ֆերմաների և կենդանաբուծական տնտեսությունների կազմակերպման ծրագիրը. դրա համար ամեն կերպ ոգնել կոոպերացիային և դեպի այդ գործին քաշել տնտեսական ու հասարակական կազմակերպություններին։*

## V. ԲԱՐԵՇԻՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ-ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

*1. Ի նկատի ունենալով արդյունաբերական շինարարության զարգացումը և ազգաբնակության ահագին աճումը՝ լայնացնել բնակարա-*



*նային շինարարության ծրագիրը, նպատակ ունենալով արդյունաբերության ու տրանսպորտի աշխատողներին բնակարաններով ապահովել, միաժամանակ նախատեսնելով կենցաղի առանձին տարրերի համայնացումը։*

*Բնակարանային քաղաքականության մեջ այնպիսի գիծ վերցնել, որ առաջին հերթին բնակարաններ հատկացվեն ամենալավ արտադրականներին և հարվածայիններին։*

*2. Շարունակել քաղաքի և նրա ծայրամասերի, բանվորական շեների, մանավանդ, հեռավոր ռայոնների և նավթարդյունաբերության նոր ռայոնների բարեշինության գործը։*

*3. Միջոցներ ձեռք առնել բարելավելու քաղաքի լեռնային մասի բնակարանային շինարարությունը և բարեշինությունը (փողոցները մայթել և ծառեր տնկել, կանալիզացիա և ջուր անցկացնել, կառուցել բուժական և հասարակական—կենցաղային հիմնարկներ և այլն)։*

*4. Շոլլարի ջրանցքը լայնացնելու և նրա ույժն ավելացնելու աշխատանքը շարունակել ու ջրանցքի ցանցով ընդգրկել քաղաքի ծայրամասերը և նոր կառուցվող շեները։*

*Ի նկատի ունենալով, որ քաղաքի ազգաբնակությունն աճում է և ջրի արտադրական ու կենցաղային գործածությունը ավելանում է, նախապատրաստական աշխատանքներ սկսել նոր ջրանցք կառուցելու համար։*

*5. Միջոցներ ձեռք առնել ավելի լայնացնելու էլեքտրաքարշի ցանցը։ 1931 թվին էլեկտրական յերկաթուղի անցկացնել մինչև Զաբրատ, իսկ հետևյալ տարիներում գիծը հասցնել մինչև Ապշերոնի հյուսիսային ծովափը (Բուզովնի, Մարդաքյան)։*

*6. 1931 թ. ընթացքում սկսել քաղաքի գազիֆիկացիան. այս աշխատանքը սկսել Անդրկայարանյան և Շահումյանի ռայոններից։*

*7. Լայնացնել Ֆաբրիկ գործարանային ռայոնի պարկը և հետագայում սկսել կուլտուրայի ու հանգստի նոր պարկերի կառուցումը։ 1931 թվին սկսել Ապշերոնում «Կանաչ քաղաքի» կառուցումը։*

## VI. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

*1. Անպայման կատարել ՎԸԿԱՊԿ-ի (բ) Կենտկոմի և կառավարության դիրեկտիվները ընդհանուր կրթության մասին և դպրոցական կրթությամբ ընդգրկել բոլոր յերեխաներին մինչև 15 տարեկան հասակը։ Ընդհանուր կրթությունը դպրոցական շենքերով ապահովելու համար մեծացնել դպրոցներ շինելու ծրագիրը, մասնակից անելով այդ գործին տնտեսական ու հասարակական կազմակերպություններին։ Ապահովել բանվորական ռայոններում դպրոցներն ավելացնելու և նորերը կառուցելու համար 3 ու կես միլիոն ռուբլուց վոչ պակաս։*

2. 1931 թ. վերջ տալ անգրագիտությանը բանվորների ու բատրակների մեջ, իսկ 1932 թ.— ամբողջ ազգաբնակչության մեջ։

3. Ուժեղացնել բանվորական կրթության ցանցը. բոլոր բանվորական ռայոններում կազմակերպել ցերեկվա և յերեկոյան բանվորական համալսարաններ։

Պրոլետարական ուսանողներին ապահովել հանրակացարաններով և սկսել «ակադեմիական քաղաքի» կառուցումը։

## VII. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Ընդլայնել հիվանդանոցների ցանցը, դրա համար էլ մեծացնել հիվանդանոցային շինարարության հատկացումները։ 1931 թվին ավարտել ծծմբա-ջրաբուժարանի կառուցումը, ձեռնարկել կենտրոնական մանկական հիվանդանոցի և ծննդաբերության ոժանդակ հիմնարկների կառուցմանը, ընդլայնել բժշկական առաջին ոգնության կետերը։

2. Հատուկ ուշադրություն դարձնել ֆիզկուլտուրայի մասսայական զարգացմանը՝ այդ միջոցառումներն ապահովելով անհրաժեշտ միջոցներով։

4. Մեծացնել մանկական կոնսուլտացիաների ցանցը և մանկամսուրների մահճակալների թիվը՝ մանավանդ բանվորական ռայոններում։

## VIII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Միջոցներ ձեռք առնել մեծացնելու բյուջեի յեկամտային մասը՝ հատուկ թե նոր աղբյուրներ վորոնելով. մանավորապես պետք է պահպանել նավթահանքերի հատկացումները և միաժամանակ աշխատել էլ ավելի կրճատելու վարչական ծախքերն ու տնտեսելու ռեժիմ մտցնելու։

Ֆինանսական-բյուջետային խիստ դիսցիպլինա սահմանել խորհրդային ապարատի բոլոր ողակներում։

2. Ֆինանսական աշխատանքում դասակարգային պարզորոշ գիծ անց կացնել այնպես, վոր բյուջեն արտացոլի տնտեսական ու կուլտուր-սոցիալիստական շինարարության հերթական անելիքները. տուրքերի հարցում վճռական պայքար մղել ապառիկների դեմ։

3. Ուժեղացնել դրամական ռեսուրսները (միջոցները) մոբիլիզացիայի յենթարկելու աշխատանքը. մանավորապես լայնացնել աշխատանքային խնայողական դրամարկղների աշխատանքը՝ հարմարեցնելով բանվոր և աշխատավոր բնակչության ավելի լրիվ սպասարկելուն։



## IX. ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏԻՎ-ԴԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Լավացնել Բաքվի միլիցիայի աշխատանքը՝ նրա կազմի վորակը բարելավելով, միլիցիայի աշխատավորների կուլտուր-կենցաղային սպասարկումն ուժեղացնելով և նրանց վորակավորումը բարձրացնելով։

2. Միլիցիայի ու դատական-դատախազական որգանների աշխատանքում ապահովել դասակարգային գծի ճշգրիտ իրագործումը՝ ճշտորեն տանելով լիովին հեղափոխական որինականության սկզբունքների վրա հիմնված պատժողական քաղաքականությունը։

## X. ՅԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Համաշխարհային կապիտալիզմի կողմից ինտերվենցիայի սպառնալիքի աճման պայմաններում մեծ ուշադրություն դարձնել յերկրի պաշտպանվելու ընդունակության ամրապնդմանը և Կարմիր Բանակի ու Նավատորմի ռազմունակության բարձրացմանը։

2. Միջոցներ ձեռք առնել բարելավելու Կարմիր Բանակի ու Նավատորմի կուլտուր-կենցաղային սպասարկումը։

3. Շարունակել աշխատանքը բնակչության մասսայական ռազմականացումն ուժեղացնելու համար՝ ամրապնդելով ՈՍՈ-Ավիախիմի և Կարմիր Կիսալուսնի աշխատանքը։

## XI. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Ամեն ջանք գործ դնել վերակառուցելու Բաքվի խորհրդի մասսայական քաղաքական ու տնտեսական աշխատանքը, վորպեսզի—

ա) կուսակցության հիմնական գծի, արդֆինպլանների կատարման, սոցիալիստական մրցման ու հարվածայնության ավելի զարգացման համար մղված պայքարում ուժեղանա Բաքխորհրդի ղեկավար դերը.

բ) Խորհրդային Ադրբեջանի ինդուստրացման, գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման և Խորհրդային Միության բամբակային հիմնական բազաներից մեկը դարձնելու հարցում Բաքվի պրոլետարիատի առաջնորդող դերը ավելի ուժեղանա.

գ) հանրապետության մեջ ռայոնական ու գյուղական խորհուրդների աշխատանքն ամրապնդվի, նրանց ոգնություն ցույց տրվի ոպորտունիստական պրակտիկայի դեմ մղած պայքարում, համատարած կոլեկտիվացում պատրաստելու և անց կացնելու ժամանակ ու այդ հիման վրա կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու,

*չքավորության շրջանում աշխատանքը կանոնավորելու և չքավորությունը կոլխոզային շինարարության հարցերի շուրջը կազմակերպելու ու կուլակության դեմ պայքարելու խնդիրներում.*

*դ) խորհրդային ապարատի բոլոր օղակների աշխատանքը բարելավել, ինքնաքննադատությունն ավելի ծավալելու և կուսակցության ու կառավարության հրահանգների կատարումն ստուգելու հիման վրա՝ շարունակել պայքարը բյուրոկրատական աղավաղումների դեմ. լայնացնել բանվորական վերահսկողությունը խորհրդային ապարատի աշխատանքի վրա (ձեռնարկների շեֆություն, հաշվետվություն բանվորական ժողովներում և այլն).*

*ե) ուժեղացնել պատգամավորների և խորհրդի բոլոր օրգանների կապը ընտրողների հետ՝ դրա համար կազմակերպել ամեն մի պատգամավորի աշխատանքը և կարգի բերել նրա ու խորհրդի հաշվետվությունը՝ նակազը կատարելու մասին՝ ընտրողների առաջ, մինչև ժամանակը լրանալը հետ կոչելով այն պատգամավորներին, որոնք լավ չեն կատարում իրենց պարտականությունները:*

*Բոլոր ձեռնարկություններում ու հիմնարկություններում կազմակերպել պատգամավորների խմբեր, նրանց այն պայքարի ղեկավարությունը քաշել, որ մղվում է արդյունաբերական ֆինանսական պլանները կատարելու ու գերակատարելու, սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը զարգացնելու համար. ավելի լավացնել խորհրդի սեկցիաների աշխատանքը, որպեսզի ուժեղանա նրանց դերը արտադրության, բանվորների կուլտուր-կենցաղային սպասարկման, բյուրոկրատիզմի դեմ պայքարելու և այլ հարցերում:*

Բանվորներ, բանվորուհիներ, կոլխոզնիկներ, կարմիր բանակայիններ, կարմիր նավաստիներ յեվ աշխատավորներ:

Խորհրդի անդամ ընտրեցեք ակտիվ կերպով սոցիալիզմ կառուցողներին, խորհուրդների համար յեվ հանուն համաշխարհային ու պրոլետարական հեղափոխության հաստատակամ մարտիկներին:

Խորհուրդների անդամ ընտրեցեք անկուսակցականների ակտիվից լավագույն հարվածայիններին յեվ կուսակցության հիմնական գծի համար տոկունությամբ պայքարող կոմունիստներին:

Կեցցեն խորհուրդները—պրոլետարական դիկտատուրայի օրգանները [Խ]որհրդային Միությունում:

Կեցցեն խորհուրդները, որ լենինյան ազգային քաղաքականությունն [ե]ն տանում:

Կեցցե կոմունիստական կուսակցությունը—մասսաների առաջնորդն ու ղեկավարը՝ համաշխարհային պրոլետարական հեղափոխության մեջ.

2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0039376